ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/10748-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1. «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-673-23.06.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 950 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԿԱՊԻՏԱԼՈՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-673-23.06.2020-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին», «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Բարեգործության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերով (այսուհետ՝ նախագծեր) նախատեսվում է անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանել նոր օրենքով և համապատասխան փոփոխություններ կատարել հարակից օրենքներում՝ միաժամանակ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների համար սահմանելով որոշակի հարկային արտոնություններ:

Նախագծերին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ «Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները Միջազգայնորեն ընդունված տերմինաբանությամբ՝ «Endowment Fund»-երի (այսուհետ՝ էնդաումենթ) գործունեության համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էդաումենթները զգալի դեր ունեն կրթության, գիտության, նորարարության, առողջապահության, մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, սոցիալական օգնության (աջակցության), բնա-պահպանության, ինչպես նաև այլ հանրօգուտ բնագավառների ոչ առևտրային կազմակերպություններին անհրաժեշտ ներդրումների, բարեգործությունների, նվիրատվությունների, նվիրաբերությունների և անհատույց այլ միջոցների ներգրավման հարցում: /…/ ՀՀ-ում անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ /էնդաումենթ/ ստեղծումը և գործունեությունը դեռևս կարգավորված չէ, իսկ գործող օրենսդրության շրջանակներում էնդաումենթ ստեղծելու նախաձեռնության դեպքում առաջանում են մի շարք խնդիրներ, քանի որ սահմանված չեն էնդաումենթի ձևավորման, համալրման և կառավարման կարգը, էնդաումենթի կազմակերպա-իրավական տեսակը և իրավական վիճակի առանձնահատկությունները, ստացված եկամուտները տնօրինելու կարգը, միջոցներ տրամադրող անձինք և նրանց իրավասությունները, հարկային արտոնությունների կիրառումը և գործունեության նկատմամբ վերահսկողությունը:»:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացնում ենք մեր դիտարկումները և առաջարկությունները:

I. «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով նախատեսվում է սահմանել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների իրավական վիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև կարգավորել անձեռնմխելի կապիտալի ձևավորման, համալրման, կառավարման և անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամուտների օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Նախագծով նախատեսվում է նաև սահմանել տվյալ հիմնադրամների տեսակով պայմանավորված առանձնահատուկ պայմաններ, որոնց պարագայում, ի տարբերություն հիմնադրամների այլ տեսակների, արգելվում է ծախսել ներգրավված ակտիվները, իսկ ներգրավված եկամուտները հնարավոր է օգտագործել միայն նախատեսված նպատակներով:

Այս առումով նախևառաջ հարկ ենք համարում անդրադառնալ նախագծի կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունների էությանը: Այսպես՝

Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը, այլ կերպ՝ ոչ առևտրային կազմակերպության նպատակային կապիտալը (endowment, էնդաումենթ) հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպության ունեցվածքի, նվիրատվությունների հաշվին ձևավորված մաս, որը հավատարմագրային կառավարման է հանձնվում կառավարող կազմակերպությանը եկամտի ստացման նպատակով և օգտագործվում է կազմակերպության կանոնադրությամբ սահմանված գործունեության ֆինանսավոր-ման համար: Էնդաումենթները ձևավորվում են ընդմիշտ և միջոցների կառավարումից ստացված եկամուտը կարող է օգտագործվել միայն կապիտալի ձևավորման ժամանակ սահմանված նպատակների իրականացման համար:

Հարկ է նաև ընդգծել, որ նպատակային կապիտալով հիմնադրամի առավելություններից է վերջինիս գործունեության թափանցիկությունը, քանզի ներդրումները հիմնադրամում հանդիսանում են կազմակերպության նկատմամբ բարձր վստահության դրսևորում: Ավելին, նպատակային հիմնադրամ կարելի է ձևավորել միայն այն դեպքում, երբ հասարակությունը վստահ է, որ կազմակերպությունը գործնականում կհետևի իր որդեգրած սկզբունքներին և գործունեության նպատակներին:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էնդաումենթների ստեղծումը կարևոր առաջադիմական քայլ է, որի գործեությունը խթանում է սպորտի, գիտության, նորարարության, առողջապահության և այլ բնագավառներում նվիրատվությունների, անհատույց այլ միջոցների ներգրավման միջոցով մի շարք խնդիրների լուծմանը և սահմանված նպատակների իրականացմանը:

Անդրադառնալով գործող կարգավորումներին՝ հարկ ենք համարում նշել, որ «Հիմնադրամների մասին» օրենքում նախատեսված են մի շարք դրույթներ՝ անձեռնմխելի կապիտալի սահմանման, վերջինիս ձևավորման և համալրման, կառավարման և կառավարումից ստացվող եկամտի տնօրինման, ինչպես նաև անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրի վերաբերյալ և այլն:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ առկա իրավական դաշտի պայմաններում ՀՀ պետական բուհերը կարողացել են ստեղծել պահուստային կապիտալ ունենալու հնարավորություն, դրանք դարձնել անձեռնմխելի ֆինանսական միջոցներ, որոնց

կառավարումն իրականացնում են հոգաբարձուների խորհրդի որոշումների միջոցով: Ցանկացած հիմնադրամ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կարող է նպատակա-յին կապիտալ առանձնացնել, որոշակի ժամանակահատվածում այն անձեռնմխելի դարձնելով, ինչը ճկուն մեխանիզմ է և հիմնադրամների արդյունավետ կառավարման միջոցով հնարավորություն է ընձեռում ապահովել ներդրված միջոցների նպատակային օգտագործումը:

Միևնույն ժամանակ նույն օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասում նախատեսված կարգավորման համաձայն՝ հիմնադրամների առանձին տեսակների առանձնահատ-կություններն ու իրավական կարգավիճակը սահմանվում են այլ օրենքներով:

Այսինքն՝ վերոգրյալից պարզ է դառնում, որ գործող կարգավորումները, մասնավորապես, «Հիմնադրամների մասին» օրենքը հիմնադրամների առանձին տեսակների պարագայում նախատեսել է վերջիններիս առանձնահատկությունները և իրավական կարգավիճակը այլ օրենքներով կարգավորելու հնարավորություն:

Ուստի, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նախագծի վերաբերյալ հետևյալ դիտարկումները և առաջարկությունները:

1. Նախագծի 3-րդ՝ «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալը՝ հիմնադրամի ակտիվների համախումբ է, որը ձևավորվում և համալրվում է սույն Օրենքով սահմանված կարգով և նպատակներով նվիրատուների տրամադրած՝ սույն օրենքով թույլատրելի գույքից և չի կարող ծախսվել կամ օտարվել այլ կերպ, քան սույն օրենքով նախատեսված ներդրումներ իրականացնելով, հանգեցնելով դրա նվազմանը:

Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

«5. Անձեռնմխելի կապիտալի ձևավորման և համալրման աղբյուր կարող է լինել նաև հիմնադրամի ստեղծման պահին հիմնադրի ներդրումը:

6. Անձեռնմխելի կապիտալը կարող է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ համալրվել նաև անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող այն եկամուտների հաշվին, որոնք չեն ծախսվել տվյալ ֆինանսական տարվա ընթացքում:»

Հիշյալ կարգավորումների վերլուծությունից պարզ է դառնում, որ անձեռնմխելի կապիտալի ձևավորման և համալրման աղբյուր կարող են լինել ոչ միայն նվիրատուների տրամադրած միջոցները, այլև հիմնադրամի ստեղծման պահին հիմնադրի ներդրումը և անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող այն եկամուտները, որոնք չեն ծախսվել տվյալ ֆինանսական տարվա ընթացքում: Հետևաբար, ներքին հակասություններից խուսափելու նպատակով նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց:

Բացի այդ, վերոգրյալի համատեքստում նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ սահմանումները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն դրանց միատեսակ ու միանշանակ ընկալումն ու կիրառումը, գտնում ենք, որ անձեռնմխելի կապիտալ հասկացության սահմանումն անհրաժեշտ է խմբագրել՝ կարգավորման որոշակիության, միանշանակ ընկալման և բազմաթիվ հղումներից խուսափելու նպատակով.

2) 2-րդ կետի համաձայն՝ թույլատրելի գույք է համարվում դրամական (այդ թվում՝

արտարժութային) միջոցները, այդ օրենքում նշված չափանիշներին համապատասխանող արժեթղթեր և ածանցյալ ֆինանսական գործիքներ, անշարժ գույք կամ այլ գույք, որը ենթադրում է մշտական և պարբերական եկամուտ իր էությունից ելնելով:

Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե ստացված գույքը կամ դրա մի մասը այդ օրենքի իմաստով չի հանդիսանում թույլատրելի գույք կամ, եթե գույքը ստացվել է սույն հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասով չնախատեսված աղբյուրից, ապա հիմնադրամը պարտավոր է գույքը ստանալուց հետո՝ 10 բանկային օրվա ընթացքում գույքն ամբողջությամբ կամ գույքի այն մասը, որը չի բավարարում այդ օրենքի պահանջները, վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այն փոխանցել պետական բյուջե: Հիմնադրամը տվյալ գույքը համարում է չստացած:

Այս առումով հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի հիշյալ կարգավորման պարագայում ստացված գույքը կամ դրա մի մասը օրենքի իմաստով չի հանդիսանում թույլատրելի գույք և նվիրատուին վերադարձնելու անհնարինության դեպքում հիմնադրամը պարտավոր է այն փոխանցել պետական բյուջե, գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպես է տվյալ գույքը հիմնադրամի կողմից համարվելու չստացած:

Բացի այդ, առաջարկում ենք վերանայել «մշտական և պարբերական եկամուտ իր էությունից ելնելով» ձևակերպումը՝ հստակեցնելով «գույքի էություն» եզրույթի բովանդակությունը:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասին.

3) 4-րդ ենթակետի համաձայն՝ շահառու է հանդիսանում անձը կամ անձանց խումբը, որի օգտին, անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին համապատասխան, կատարվում է որոշակի վճարում, մատուցվում է ծառայություն կամ փոխանցվում է որոշակի գույք:

Այս առումով գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել հիշյալ կետում նախատեսված շահառուների շրջանակը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ պարագայում պարզ չէ, թե արդյոք «անձ կամ անձանց խումբ» ներառում է բացառապես ֆիզիկական անձանց, թե իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին ևս:

2. Նախագծի 4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը սահմանում է հիմնադրամի հասկացությունը, այն է՝ հիմնադրամը հիմնադրամի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է մշակույթի, կրթության, սպորտի, գիտության, առողջապահության, սոցիալական և այլ ոչ առևտրային բնագավառներում գործունեություն իրականացնելու համար:

«Հիմնադրամների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:

Վերոգրյալ կարգավորումների համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «հիմնադրամի կարգավիճակ» եզրույթն արդեն իսկ ներառում է ոչ առևտրային կազմակերպություն լինելու և մշակույթի, կրթության, սպորտի, գիտության, առողջապահության և այլ ոչ առևտրային

բնագավառներում գործունեություն իրականացնելու համար ստեղծված լինելու հատկանիշները: Հետևաբար, տարընկալումներից և դրույթների անհարկի կրկնություններից խուսափելու նպատակով, առաջարկում ենք կամ նախագծում հստակ նախատեսել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի լիարժեք և համապարփակ սահմանումը կամ հղում կատարել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նախագծերի կարգավորման առարկային առնչվող իրավական ակտերում սահմանված չէ «ոչ առևտրային բնագավառ» եզրույթը.

2) 2-րդ մասը առաջարկում ենք հանել, նախագծի 1-ին հոդվածի դրույթների անհարկի կրկնություններից խուսափելու նպատակով:

3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին՝

1) մասում հարկ ենք համարում հստակ ամրագրել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման արգելումը.

2) մասի 2-րդ կետը «սույն օրենքով» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «զբաղվել» բառով:

4. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետում «գնահատված անկախ գնահատողի կողմից և տեսակները» բառերն անհրաժեշտ է փոխարինել «գնահատված անկախ գնահատողի կողմից և միջոցների տեսակները» բառերով.

2) 7-րդ կետում «շահառուները» բառն անհրաժեշտ է փոխարինել «շահառուների վերաբերյալ տեղեկությունները» բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին.

3) 11-րդ կետի համաձայն՝ հիմնադրամի կանոնադրությամբ սահմանվում է վերստուգիչի լիազորությունները, մինչդեռ նախագծում բացահայտված չէ, թե ով կարող է հանդիսանալ վերստուգիչ: Այս առումով նախագծում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ վերջինիս վերաբերյալ:

5. Նախագծի 7-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հաստատում է հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունը անձեռնմխելի կապիտալի ձևավորման և համալրման, ինչպես նաև անձեռնմխելի կապիտալից ստացած եկամտի օգտագործման և բաշխման վերաբերյալ: Այս առումով հարկ է նշել, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆինասական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն են, հետևաբար, առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից հանել «անձեռնմխելի կապիտալի ձևավորման և համալրման, ինչպես նաև անձեռնմխելի կապիտալից ստացած եկամտի օգտագործման և բաշխման վերաբերյալ» բառերը, ինչպես նաև «ֆինանսական հաշվետվությունը» բառը փոխարինել «ֆինանսական հաշվետվությունները» բառերով.

2) 5-րդ մասում խոսք է գնում հոգաբարձուների խորհրդի կանոնադրության մասին, մինչդեռ նախագծով ինչպես նաև «Հիմնադրամների մասին» օրենքում նախատեսված չեն դրույթներ՝ հոգաբարձուների խորհրդի կանոնադրության առկայության վերաբերյալ: Այս

առումով նախագծի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նախատեսելով համապատասխան կարգավորումներ:

6. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել անձեռնմխելի կապիտալի կառավարման գործընթացը: Նախագծում բացակայում է անձեռնմխելի կապիտալի դրամական միջոցները բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական պարտատոմսերում ներդնելու վերաբերյալ դրույթը:

7. Նախագծի 9-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերից անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների գործունեությունը պաշտպանելու նպատակով, առաջարկում ենք լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Անձեռնմխելի կապիտալի կազմում կարող են ընդգրկվել միայն այն դրամական միջոցները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին ՀՀ օրենքի համաձայն չեն համարվում կասկածելի ծագում ունեցող:»,

2) 4-րդ մասն առաջարկում ենք լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«3) Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից որոշակի ժամանակահատվածով կառավարման համար հանձնած միջոցները»:

Անձեռնմխելի կապիտալի համալրման առաջարկվող աղբյուրը կհեշտացնի հիմնադրամների համար գումարների հավաքագրումը և հնարավորություն կտա կառավարել դրանք առանց փաստացի սեփականատիրոջ փոփոխության,

3) 7-րդ կետը, չթույլատրելի գույքով անձեռնմխելի կապիտալի ձևավորումն և համալրումը բացառելու նպատակով, առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե ստացված գույքը կամ դրա մի մասը սույն օրենքի իմաստով չի հանդիսանում թույլատրելի գույք կամ, եթե գույքը ստացվել է սույն հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասով չնախատեսված աղբյուրից, ապա հիմնադրամը պարտավոր է գույքը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցել պետությանը»:

8. Նախագծի 10-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալը կառավարվում է բացառապես սույն հոդվածով նախատեսված կարգով, մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ թե նշված հոդվածում, թե նախագծի այլ դրույթներում անձեռնմխելի կապիտալի կառավարման կարգի վերաբերյալ կարգավորումներ նախատեսված չեն:

Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ «Հիմնադրամների մասին» օրենքին, որտեղ բացահայտվում է անձեռնմխելի կապիտալի կառավարման էությունը և բովանդակությունը: Մասնավորապես, «Անձեռնմխելի կապիտալի կառավարումը» վերտառությամբ 39.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալը կարող է կառավարվել բացառապես պետական պարտատոմսերում ներդրումներ կատարելու, դրանց տոկոսավճարներից և մարումից եկամուտներ ստանալու և ստացված եկամուտները սույն օրենքով սահմանված կարգով ծրագրին համապատասխան օգտագործելու միջոցով:

Այսինքն՝ վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում, որ նույնաբովանդակ հարաբերությունները կարգավորող օրենքներում նախատեսվում են անձեռնմխելի կապիտալը կառավարման վերաբերյալ միմյանցից տարբերվող կարգավորումներ, ավելին՝ նախագծում նախատեսված չեն դրույթներ՝ բացառապես պետական պարտա-տոմսերում

ներդրումներ կատարելու պարագայում անձեռնմխելի կապիտալի կառա-վարման վերաբերյալ:

Այս առումով նախագծի դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հիմնադրամների մասին» օրենքի դրույթներին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ «անձեռնմխելի կապիտալի դրամական միջոցները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրվելու են ՀՀ պետական պարտատոմսերում, որով պարտադրվում է, որ այդ միջոցները ներդրվեն երաշխավորված եկամուտ ապահովող ակտիվներում, ինչպիսիք են պետական պարտատոմսերը, և զերծ լինեն կորստի ռիսկից:».

2) 3-րդ մասի համաձայն՝ հիմնադրամը պարտավոր է վարել անձեռնմխելի կապիտալի ձևավորման և համալրման, կառավարման, կառավարումից ստացված եկամուտը շահառուներին բաշխելու հետ կապված բոլոր գործարքների հաշվապահական հաշվառումը: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում, և հաշվի առնելով այն հանագամանքը, որ հաշվապահական հաշվառման համակարգում արտացոլման են ենթակա կատարված բոլոր գործարքները, այլ ոչ թե միայն նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասում նշվածները՝ առաջարկում ենք նշված մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հիմնադրամն իր հաշվապահական հաշվառումը վարում է «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքին համապատասխան:».

3) 7-րդ մասի համաձայն անձեռնմխելի կապիտալով հիմնադրամն իր գույքի կառավարման համար կարող է օգտվել գույքի հավատարմագրային կառավարչի կամ ներդրումային ծառայություններ մատուցող անձի ծառայություններից:

Նախագծերի փաթեթում ներառված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն ներդրումային ծառայու-թյուններ մատուցող անձ չհամարվող անձի կողմից անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի միջոցների կառավարումը չպետք է համարվի ներդրումային ծառայության մատուցում: Այսինքն՝ հիմնադրամի հավատարմագրային կառավարիչը փաստացի հնարավորություն է ստանում կառավարել հիմնադրամի արժեթղթերի պորտֆելը՝ դուրս գալով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի կարգավորման դաշտից:

Նման կարգավորումն անթույլատրելի է, քանի որ արժեթղթերի շուկայում գործող և երրորդ անձանց արժեթղթերի պորտֆելը կառավարող սուբյեկտը պետք է լինի շուկայի մասնագիտացված մասնակից՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձ, և գործի համապատասխան կարգավորումների ներքո:

Ավելին, եթե հավատարմագրային կառավարիչը չհամարվի ներդրումային ծառայություններ մատուցող անձ, նա գործնականում չի կարողանա արդյունավետ կառավարել հիմնադրամի արժեթղթերի պորտֆելը, քանի որ հնարավորություն չի ունենա գործարքներ կատարել արժեթղթերի շուկայում:

Աշխարհի լավագույն փորձը նույնպես ցույց է տալիս, որ հիմնադրամի կառավարման գործառույթը պետք է լինի առանձին և իրականացվի պրոֆեսիոնալ անձանց կողմից, ինչը կարևոր գործոն է նվիրատուների վստահության ձևավորման համար և բխում է նրանց շահերից:

Ըստ այդմ՝ անհասկանալի է նաև նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված այն կարգավորումը, ըստ որի անձեռնմխելի կապիտալի հավատարմագրային կառավարման ընթացքում կնքվող գործարքները պետք է կնքվեն ՀՀ օրենքների և իրավական ակտերի, այդ թվում ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծերի փաթեթից հանել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Դրա արդյունքում անհրաժեշտություն չի առաջանա նախագծում նախատեսել, որ հավատարմագրային կառավարիչը պետք է առաջնորդվի նաև Կենտրոնական բանկի իրավական ակտերով, քանի որ դա բխելու է նրա գործունեության էությունից: Ուստի նախագծի 10-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ պարբերությունը ևս անհրաժեշտ է հանել նախագծից:

9. Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ հոդվածով.

«Հոդված 12. Հիմնադրամին ամրացված գույքը

1. Հիմնադիրը կարող է հիմնադրամին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից հիմնադրամին ամրացված գույքը:

3. Հիմնադրամն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման, ինչպես նաև հանձնել վարձակալության կամ այլ կերպ օգտագործել եկամուտ ստանալու նպատակով:

4. Հիմնադրամին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5. Հիմնադրի կողմից գույքը հիմնադրամին ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար: Հիմնադիրը չի կարող հիմնադրամին ամրացնել գույք, որի նկատմամբ երրորդ անձինք ունեն իրավունքներ կամ պարտականություններ:

6. Հիմնադրի կողմից հիմնադրամին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ հիմնադրամի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:»:

10. Նախագծի 13-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադրամի վարչակառավարչական ծախսերն են նաև հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցման հետ կապված ծախսերը: Այս առումով անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով է նախատեսվում իրականացվել հոգաբարձուների խորհրդի անդամների փոխհատուցումը:

Վերոգրյալի կապակցությամբ առաջարկում ենք նախատեսել դրույթներ՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցման կարգ և առավելագույն չափ սահմանելու վերաբերյալ:

11. Նախագծի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը, ինչպես նաև դրանում կատարված լրացումները և փոփոխությունները հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ընդունվելուց հետո 5-օրյա ժամկետում

ներկայացվում է իրավաբանական անձանց գրանցող մարմնին՝ հիմնադրամի արխիվային գործում պահպանման համար:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «Հիմնադրամների մասին» օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալի եկամուտներն օգտագործելու տարեկան ծրագիրը, ինչպես նաև դրանում կատարված լրացումները և փոփոխությունները հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ընդունվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, հրապարակվում է հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում:

Հարկ է նաև նշել, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ ծրագիրը կամ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացնելու պահանջ նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ անհրաժեշտ է հիմնավորել անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը, ինչպես նաև դրանում կատարված լրացումները և փոփոխությունները իրավաբանական անձանց գրանցող մարմնին ներկայացնելու վերաբերյալ կարգավորումը, ինչպես նաև հստակեցնել, թե ինչ իրավական հետևանքներ են առաջանալու հիշյալ ծրագիրը պետական գրանցում իրականացնող մարմին չներկայացնելու համար:

Հիշյալ կարգավորման հիմնավորման պարագայում առաջարկում ենք նաև «իրավաբանական անձանց գրանցող մարմնին» բառերը փոխարինել «իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին» բառերով՝ նկատի ունենալով «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի դրույթները:

12. Նախագծի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի համաձայն՝ եթե հիմնադրամի տարեկան շրջանառությունը հաշվետու տարում գերազանցում է 10 մլն դրամը, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններին ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը, ենթակա են պարտադիր աուդիտի՝ անկախ աուդիտորի կողմից, որին ընտրում է հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը: Առաջարկում ենք անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների համար սահմանել պարտադիր աուդիտի ենթարկվելու նույն չափանիշը, ինչ նախատեսված է «Հիմնադրամների մասին» օրենքով.

2) 2-րդ մասում առաջարկում ենք «անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը» բառերը փոխարինել «անկախ աուդիտորական եզրակացությունը» բառերով, իսկ «ստուգված տարեկան ֆինանսական հաշվետվությունները» բառերը՝ «աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունները» բառերով»:

13. Նախագծի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում կիրառվող «հիմնադրամից ստացված և ծախսված դրամական միջոցների չափը» եզրույթն առաջարկում ենք վերանայել հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրամական միջոցները ձևավորվում են ոչ թե իրավահարաբերության սուբյեկտից, այլ վերջինիս կողմից իրականացվող որոշակի գործողության արդյունքում.

2) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, հիմնադրամը Հայաստանի Հանրապետության հրապա-

րակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (http://www.azdarar.am) պարտավոր է հրապարակել՝ իր ֆինանսական գործունեության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը (աուդիտի ենթարկվելու դեպքում):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի ենթարկելու վերջնաժամկետը ավելի ուշ է, քան հիմնադրամի կողմից հրապարակման ենթակա հաշվետվության ժամկետը, որին պետք է կցվի աուդիտի եզրակացությունը, առաջարկում ենք նախագծի 16-րդ հոդվածի 1-ին և 15-րդ հոդվածի 1-ին մասերում սահմանված ժամկետները համապատասխանեցնել:

Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադրամների գործունեության հաշվետվությունների, ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ աուդիտորական եզրակացությունների վերջնաժամկետ է սահմանված հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը:

Հաշվի առնելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ առաջարկում ենք նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված իր ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև, օրենքով սահմանված դեպքում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:».

3) 2-րդ մասով նախատեսվում է, որ տարեկան հաշվետվությունն անհրաժեշտության դեպքում ուղարկվում է նվիրատուներին (կտակի դեպքում՝ նաև կտակարարի ժառանգներին և կտակատարներին, վերակազմակերպված իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավահաջորդին), մինչդեռ թե նախագծից, թե նախագծին կից ներկայացված հիմնավորումից հնարավոր չէ բացահայտել, թե ինչ չափանիշների հիման վրա է որոշվելու տարեկան հաշվետվության տրամադրման անհրաժեշտությունը:

Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է նվիրատուի՝ հիմնադրամի գործունեության վերաբերյալ որոշակի տեղեկություններ ստանալու իրավունքը, առաջարկում ենք քննարկել «անհրաժեշտության դեպքում» բառերը «նվիրատուի պահանջով» բառերով փոխարինելու հարցը.

4) 3-րդ մասի համաձայն՝ տարեկան հաշվետվության ձևը, հրապարակման և ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադա-տության նախարարությունը, մինչդեռ «Հիմնադրամների մասին» օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետվության ձևը, հրապարակման կարգը սահմանում է Պետական եկամուտների կոմիտեն: Այս առումով պարզ չէ, թե ինչով է պայմանավորված արդարադատության նախարարության կոմից հաշվետվությունների ձևի, հրապարակման կարգի սահմանման վերաբերյալ կարգավորումների նախատեսումը, ինչը թույլ չի տալիս գնահատել հիշյալ կարգավորման իրավաչափությունն ու նպատակահարմարությունը:

14. Նախագծի 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասով նախատեսվում է, որ «Հիմնադրամների մասին» օրենքով նախա-տեսված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ՀՀ արդարադատության նախարարությունը, մինչդեռ «Հիմնադրամների մասին» օրենքի

ընդհանուր կարգավորման համաձայն՝ հիմնադրամի կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեն:

Այս առումով հարկ է նշել, որ նախագծի հիմնավորման մեջ որևէ անդրադարձ չի կատարվել այն հարցին, թե ինչով է պայմանավորված ընդհանուր կարգավորումից նման բացառություն նախատեսումը և հիմնադրամի նկատմամբ վերահսկողության իրականացման լիազորությունը ՀՀ արդարադատության նախարարությանը վերապահելը.

2) 2-րդ մասով սահմանվում է, որ եթե հիմնադրամն անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացած եկամուտն օգտագործել է անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին անհամապատասխան, ապա ՀՀ արդարադատության նախարարությունն իրավունք ունի պահանջելու տրամադրված միջոցները 10-օրյա ժամկետում վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ ՀՀ արդարադատության նախարարությունը կարող է օգտվել այս իրավունքից՝ հիմնադրամին գրավոր նախազգուշացնելուց և իր կողմից նշված ողջամիտ ժամկետում հիմնադրամի կողմից խախտումները չվերացնելուց հետո:

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից պարզ է դառնում, որ եթե հիմնադրամի կողմից անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացած եկամուտն օգտագործվել է անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին անհամապատասխան, ապա վերահսկողը նախազգուշացնում և որոշակի ժամկետ է նախատեսում խախտումը վերացնելու համար, իսկ եթե հիմնադրամը սահմանված ժամկետում խախտումը չի վերացնում, ապա վերահսկողն իրավունք ունի պահանջելու տրամադրված միջոցները 10-օրյա ժամկետում վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

Այս առումով նախ հարկ է նշել, որ «Հիմնադրամների մասին» օրենքի համաձայն՝ հիմնադրամի կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեն, հետևաբար առաջարկում ենք նախագծի հիշյալ կետում «ՀՀ արդարադատության նախարարություն» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտե» բառերով:

Բացի այդ, գտնում ենք, որ վերահսկողին՝ նման հայեցողական լիազորության վերապահումը կարող է հանգեցնել չհիմանվորված հայեցողական լիազորության դրսևորման և արդյունքում նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի խախտման, քանի որ վերահսկողն իր հայեցողությամբ որոշում է կայացնելու՝

- պահանջել դրամական միջոցները վերադարձնել նվիրատուին կամ փոխանցել պետական բյուջե,

- չպահանջել:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք «իրավունք ունի» բառերը փոխարինել «պահանջում է» ձևակերպմամբ.

3) 4-րդ մասի համաձայն՝ հիմնադրամը սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը: Սահմանված ժամկետում հաշվետվությունը չհրապարակելու,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն այդ մասին չծանուցելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հիմնադրամի տնօրենի նկատմամբ կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.18-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 169.18-րդ հոդվածով կարգավորվում են հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելու կամ թերի հրապարակելու հետ կապված հարաբերությունները:

Նույն օրենսգրքի 244.2-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 169.18-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են հարկային մարմինները՝ իրենց վերապահված իրավասությունների շրջանակներում: Հարկային մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության վերադաս հարկային մարմնի վարչությունների պետերը և հարկային մարմնի հարկային (տարածքային) տեսչության պետերը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով Վարչական իրավա-խախտումների մասին ՀՀ օրենսգրքի պահանջներին:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ «Հիմնադրամների մասին» օրենքի 38-րդ «Հիմնադրամի գործունեության վերահսկողությունը» հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանված ժամկետում սույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունը չհրապարակելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Պետական եկամուտների կոմիտեն կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Այս առումով նույնպես առաջարկում ենք «ՀՀ արդարադատության նախարա-րություն» բառերը փոխարինել «Պետական եկամուտների կոմիտե» բառերով:

15. Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ հիմնադրամի լուծարման ժամանակ օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ՝ հիմնադրամի գույքը փոխանցվում է նվիրատուներին՝ նրանց կողմից հիմնադրամին տրամադրված միջոցների չափին համապատասխան, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն, հետևաբար՝ հիմնադրամի լուծարման ժամանակ մնացորդային գույքը չի կարող տրամադրվել նվիրատուներին, այլ ամբողջությամբ ենթակա է փոխանցման պետական բյուջե: Այդ նկատառումից ելնելով առաջարկում ենք նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետը խմբագրել:

16. Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ

մտնելը ստեղծված այն կազմակերպությունները, որոնց անվանման մեջ պարունակվում են «անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ» բառերը, մեկ տարվա ընթացքում պարտավոր են սահմանված կարգով փոփոխել իրենց անվանումը՝ դրանից հանելով «անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ» բառերը: Այս առումով նկատի ունենալով «Հիմնադրամների մասին» օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված այն կազմակերպությունները, որոնց կազմակերպական-իրավական ձևը հիմնադրամ չէ, բայց իրենց անվանման մեջ պարունակում են «հիմնադրամ» բառը, մեկ տարվա ընթացքում պարտավոր են սահմանված կարգով փոփոխել իրենց անվանումը (ֆիրմային անվանումը)՝ դրանից հանելով «հիմնադրամ» բառը, գտնում ենք, որ անհրաժեշտ է պարտադիր պահանջ նախատեսել միայն այն կազմակերպությունների համար, որոնք չեն հանդիսանում անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներ:

17. Առաջարկում ենք նախագծում նախատեսել նաև հիմնադրամի լուծարման կարգը առանձին հոդվածի տեսքով:

II. «Հիմնադրամների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով նախատեսվում է լրացում կատարել օրենքի 1-ին հոդվածում, համաձայն որի՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների գործունեության սահմանափակումների, կանոնադրության, կառավարման մարմինների իրավասությունների, գույքի ձևավորման և կառավարման, ֆինանսական գործունեության աուդիտի, հաշվետվությունների ներկայացման և լուծարման առանձնահատկությունները սահմանվում են «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով: Սույն օրենքի դրույթները տարածվում են անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի վրա, եթե «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով այլ բան սահմանված չէ:»:

Օրենքի նախագծի 1-ին հոդվածով կատարվող լրացման արդյունքում «Հիմնադրամների մասին» օրենքի 1-ին հոդվածում նախատեսվող կարգավորումը ներառում է իրավահարաբերությունների այլ շրջանակ, որոնք կարգավորման են ենթակա «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով:

Տվյալ դեպքում, «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքի առկայության պարագայում և ելնելով նույնաբնույթ և նույնաբովանդակ իրավահարաբերությունները մեկ իրավական ակտով համապարփակ և ընդգրկուն կարգավորելու նպատակահարմարությունից և անհրաժեշտությունից, առաջարկում ենք քննարկել «Հիմնադրամների մասին» օրենքում անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների վերաբերյալ կարգավորումները ուժը կորցրած ճանաչելու հարցը՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների վերաբերյալ բոլոր առանձնահատկությունները սահմանելով «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով:

Նախագծի 1-ին հոդվածում «ֆինանսական գործունեության աուդիտի» բառերը առաջարկում ենք փոխարինել «ֆինանսական հաշվետվությունների աուդիտի» բառերով»:

III. «Բարեգործության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով նախատեսվում է նոր կարգավորում, որի համաձայն՝ օրենքի դրույթները

տարածվում են անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների վրա:

Այս առումով գտնում ենք, որ հիշյալ կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բարեգործության մասին» օրենքի համաձայն՝ բարեգործությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից սույն օրենքով սահմանված նպատակների իրականացման համար /…/ օրենքով չարգելված նյութական և հոգևոր օգնության տրամադրումն է: Այսինքն՝ անկախ հիշյալ կարգավորման նախատեսման՝ «Բարեգործության մասին» օրենքի դրույթները տարածվելու են անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների վրա այնքանով, որքանով դրանք կհամապատասխանեն հիշյալ օրենքի դրույթներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծերի փաթեթից հանել «Բարեգործության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

IV. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ.

«Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների 10-րդ կետի 3-րդ ենթակետում ներկայացված հիմնավորումներով առաջարկել ենք նախագծերի փաթեթից հանել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

V. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ.

1) «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝

ա. անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների և պետական պարտատոմսերի փոխանցումը (տրամադրումը), ինչպես նաև անձեռնմխելի կապիտալի կառավարումից եկամտի ստացումը ազատվում են ԱԱՀ-ից (Հոդված 1.),

բ. անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին փոխանցված (տրամադրված) դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցները և պետական պարտատոմսերը, ինչպես նաև անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտը ազատվում են շահութահարկի վճարումից (Հոդված 2.).

2) եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներից ստացվող գույքը և դրամական միջոցները (Հոդված 3.):

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ.

1. ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքները և գործառնությունները: Մասնավորապես, նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում

ապրանքի մատակարարումը:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի համաձայն՝ ՀՀ հարկային օրենսգրքի կիրառության իմաստով ապրանք է համարվում դրամական միջոցից, ֆինանսական ակտիվներից, ոչ նյութական ակտիվներից, գուդվիլից տարբերվող ցանկացած ակտիվ, եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Նույն հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի համաձայն՝ ապրանքի մատակարարումը՝ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն է մեկ անձից մեկ այլ անձի՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց,

ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են ԱԱՀ-ից ազատված գործարքները: Ընդ որում, ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում է բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արժեթղթերի օտարումը, արժեթղթերի ի պահ ընդունման և հաշվառման ծառայությունների մատուցումը:

Վերոգրյալ կարգավորումների վերլուծության արդյունքում նախագծից առաջար-կում ենք հանել ԱԱՀ-ի գծով արտոնություններ սահմանող դրույթները, քանի որ նախագծով սահմանված գործարքները, մասնավորապես՝ դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների տրամադրումը, անձեռնմխելի կապիտալի կառավարումից եկամտի ստացումը, օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չեն համարվում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ, և ԱԱՀ-ից ազատման արտոնություն սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ հայտնում ենք, որ այդ գործարքի մասով ԱԱՀ-ից ազատման արտոնություն արդեն իսկ սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «դ» ենթակետով:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ ենք համարում նշել, որ նախագծի 1-ին հոդվածի անհրաժեշտությունը բացակայում է:

2. ՀՀ հարկային օրենսգրքի գործող 108-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճար-ները), աշխատանքները և ծառայությունները չեն համարվում եկամուտ, ինչը նշանակում է, որ անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին փոխանցված (տրամադրված) դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցները և պետական պարտատոմսերը արդեն իսկ շահութահարկով ենթակա չեն հարկման, քանի որ այդ միջոցները, որպես անհատույց ստացված ակտիվներ, չեն համարվում եկամուտ և չեն ներառվում համախառն եկամտի մեջ (հարկման առումով եկամուտ չհամարվող տարրեր են), հետևաբար՝ այդ միջոցներից հիմնադրամների մոտ շահութահարկ հաշվարկելու և վճարելու պարտավորություն չի առաջանում:

Անդրադառնալով անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամտի չափով այդ հիմնադրամները շահութահարկի վճարումից ազատելու դրույթին՝ հարկ ենք համարում նշել, որ հարկային նման արտոնության տրամադրումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հետևյալ հիմնական նկատառումներից ելնելով՝

1) նոր հարկային արտոնությունների սահմանումը չի բխում ՀՀ կառավարության

կողմից ներկայումս իրականացվող հարկային քաղաքականության ուղղություններից, քանի որ ներկա պահին իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է հարկման բազաների ընդլայնմանը և հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը: Քաղաքականության նման ուղղությունը ամրագրված է ՀՀ կառավա-րության կողմից հաստատված մի քանի ռազմավարական փաստաթղթերում: Մասնավորապես, քաղաքականության նման ուղղությունը ամրագրված է ս.թ. փետրվարի 18-ին հաստատված՝ հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգով, ինչպես նաև 2019 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությամբ.

2) առաջարկվող հարկային արտոնության սահմանումը արդարացված չէ հարկ-ման հավասարության և արդարության սկզբունքների տեսանկյունից: Մասնավորապես, անհասկանալի է, թե ինչու «Անձեռնմխելի կապիտալով հիմնա-դրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ-ների հարկային

պարտավորությունները պետք է հաշվարկվեն ավելի արտոնյալ պայմաններում, իսկ այլ հիմնադրամների գործունեությունը շարունակի հարկվել ընդհանուր սահմանված կանոնների ներքո.

3) առաջարկվող հարկային արտոնության սահմանումը հիմնավորված չէ նաև

հարկումից խուսափելու ռիսկերը նվազեցնելու և իրականացվող հարկային վարչարա-րության արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյուններից, քանի որ օրենսդրու-թյան կիրառության փորձը ցույց է տալիս, որ ցանկացած նոր հարկային արտոնության սահմանումը մշտապես ուղեկցվում է հարկումից խուսափելու և չարաշահումների ռիս-կերի ավելացմամբ.

4) անհասկանալի է, թե ինչու է նմանատիպ հիմնադրամների ստեղծման և գոր-ծունեության նպաստավոր պայման դիտարկվում հարկային արտոնությունների տրա-մադրումը: Այդ դեպքում տնտեսության բոլոր ոլորտները պետք է խնդիր ունենան, քանի որ գործող հարկային օրենսդրությամբ հարկային արտոնություններ սահմանված են միայն առանձին դեպքերի համար.

5) ցանկացած հարկային արտոնության տրամադրում ենթադրում է հարկային եկամուտների կորուստ, հետևաբար նաև՝ առողջապահական, սոցիալական, կրթական, բնապահպանական և այլ հանրօգուտ ոլորտներում չկատարված բյուջե-տային ծախսեր: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ պետու-թյան ծախսային քաղաքականության շրջանակներում պետական աջակցության բյուջե-տային գործիքակազմն ավելի հասցեական ու, հետևաբար, նաև ավելի արդյունավետ է՝ ակնհայտ է դառնում, որ հարկային արտոնությունների տրամադրումը պետական աջակցության լավագույն միջոցը չէ, քանի որ հարկային արտոնությունը դրա իրական հասցեատերերի համար որոշակի կոնկրետ արդյունք չերաշխավորելով հանդերձ՝ հանգեցնում է հարկային ծախսերի առաջացման՝ պետությանը զրկելով աջակցության ավելի հասցեական ծրագրեր իրականացնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ ենք համարում նշել, որ նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող շահութահարկի գծով արտոնության տրամադրումը մասամբ լուծված է, իսկ մնացած մասով ընդունելի չէ, առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածը հանել:

3. ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում ոչ առևտրային կազմակերպություններից անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները: Ուստի նախագծի 3-րդ հոդվածի անհրաժեշտությունը բացակայում է:

Ամփոփելով վերը նշվածը՝ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունելի չէ և առաջարկում ենք այն նախագծերի փաթեթից հանել:

Ամփոփելով նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկություն-ները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծերի փաթեթը լուրջ լրամշակման կարիք ունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 ապրիլի 2021 թվականի N 462 - Լ

«ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԿԱՊԻՏԱԼՈՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-673-23.06.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկություններին:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-673-23.06.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԿԱՊԻՏԱԼՈՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1.Սույն օրենքը սահմանում է անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների (այսուհետ՝ Հիմնադրամ) իրավական վիճակի առանձնահատկությունները, ինչպես նաեւ կարգավորում է անձեռնմխելի կապիտալի ձեւավորման, համալրման, կառավարման եւ անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամուտների օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Հիմնադրամի մասին օրենսդրությունը

1.Հիմնադրամի մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, «Հիմնադրամների մասին» օրենքից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

2.Եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը:

3.«Հիմնադրամների մասին» օրենքի դրույթները տարածվում են Հիմնադրամի վրա, եթե սույն օրենքով առանձին իրավահարաբերությունների կարգավորման առանձնահատկություններ սահմանված չեն:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) անձեռնմխելի կապիտալ՝ Հիմնադրամի ակտիվների համախումբ, որը ձեւավորվում եւ համալրվում է սույն Օրենքով սահմանված կարգով եւ նպատակներով նվիրատուների տրամադրած՝ սույն օրենքով թույլատրելի գույքից եւ չի կարող ծախսվել կամ օտարվել այլ կերպ, քան սույն օրենքով նախատեսված ներդրումներ իրականացնելով, հանգեցնելով դրա նվազմանը.

2) թույլատրելի գույք՝ դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցներ, սույն օրենքում նշված չափանիշներին համապատասխանող արժեթղթեր եւ ածանցյալ ֆինանսական գործիքներ, անշարժ գույք կամ այլ գույք, որը ենթադրում է մշտական եւ պարբերական եկամուտ իր էությունից ելնելով.

3) նվիրատու՝ անձեռնմխելի կապիտալի ձեւավորման կամ համալրման նպատակով՝ նվիրատվությամբ կամ կտակային հանձնարարությամբ չծանրաբեռնված կտակով Հիմնադրամին անհատույց թույլատրելի գույք տրամադրած անձ.

4) շահառու՝ անձ կամ անձանց խումբ, որի օգտին, անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին համապատասխան, կատարվում է որոշակի վճարում, մատուցվում է ծառայություն կամ փոխանցվում է որոշակի գույք.

5) անձեռնմխելի կապիտալից ստացված եկամուտ՝ անձեռնմխելի կապիտալի կառավարման արդյունքում գոյացած եկամուտ.

6) ներդրումային ծառայություն մատուցող անձ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով նախատեսված ներդրումային ծառայություն մատուցող անձ.

7) հավատարմագրային կառավարիչ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված գույքի հավատարմագրային կառավարիչ.

8) գույքի կառավարման այլ մասնագիտացված անձ՝ անձեռնմխելի կապիտալում ներառված ակտիվների կառավարման ոլորտում մասնագիտացված անձ:

Հոդված 4. Հիմնադրամի իրավական կարգավիճակը

1.Հիմնադրամը հիմնադրամի կարգավիճակ ունեցող ոչ առեւտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է մշակույթի, կրթության, սպորտի, գիտության, առողջապահության, սոցիալական եւ այլ ոչ առեւտրային բնագավառներում գործունեություն իրականացնելու համար:

2.Հիմնադրամի իրավական վիճակի եւ այլ առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

3.Հիմնադրամը չի կարող ստեղծվել որոշակի ժամկետով:

Հոդված 5. Հիմնադրամի գործունեության սահմանափակումները

1.Հիմնադրամը չի կարող՝

1) անձեռնմխելի կապիտալը ծախսել կամ օտարել այլ կերպ, քան սույն օրենքով սահմանված ներդրումներ իրականացնելով՝ հանգեցնելով դրա նվազմանը.

2) սույն օրենքով չնախատեսված՝ եկամուտ ապահովող գործունեությամբ.

3) վերակազմակերպվել:

Հոդված 6. Հիմնադրամի կանոնադրությունը
1.Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանվում է նրա՝

1) անվանումը, որը պետք է ներառի «անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ» արտահայտությունը.

2) գտնվելու վայրը.

3) նպատակները.

4) անձեռնմխելի կապիտալի սկզբնական միջոցների, այդ թվում՝ յուրաքանչյուր նվիրատուի տրամադրած դրամական միջոցների, ինչպես նաեւ Հիմնադրամի հիմնադրի (այսուհետ՝ հիմնադիր) տրամադրած կամ նրա կողմից ամրացրած սկզբնական այլ գույքի չափը՝ գնահատված անկախ գնահատողի կողմից եւ տեսակները.

5) գույքի տեսակները, որոնք Հիմնադրամը պատրաստ է ընդունել որպես անձեռնմխելի կապիտալ.

6) գույքի կառավարման քաղաքականությունը, այդ թվում՝ դրամական միջոցների ներդրումային քաղաքականությունը, նշելով թույլատրելի ակտիվների ցանկը եւ ռիսկայնության չափանիշները, որոնցում Հիմնադրամը կարող է ներդնել անձեռնմխելի կապիտալը.

7) շահառուները.

8) կառավարման մարմինների կազմավորման կարգը եւ իրավասությունները, նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը.

9) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների՝ իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցման չափն ու վճարման կարգը.

10) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամ դառնալու հնարավորություն նախատեսելու դեպքում՝ պատվավոր անդամ դառնալու համար նվիրատուի կողմից տրամադրվելիք դրամական միջոցների նվազագույն չափը.

11) վերստուգիչի լիազորությունները.

12) լուծարման կարգը.

13) գործունեությանն առնչվող այլ դրույթներ, որոնք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

2.Կանոնադրությունում փոփոխությունները չեն կարող վերաբերել սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ եւ 10-րդ կետերին:

3.Կանոնադրությունում կատարված փոփոխությունները 5-օրյա ժամկետում հրապարակվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (http://www.azdarar.am/),:

Հոդված 7. Հիմնադրամի կառավարման մարմինները

1.Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.

2) Հիմնադրամի տնօրենը:

2.Հիմնադրամն ունի վերստուգիչ:

3.Սույն օրենքին եւ Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը՝

1) Հաստատում է Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունը անձեռնմխելի կապիտալի ձեւավորման եւ համալրման, ինչպես նաեւ անձեռնմխելի կապիտալից ստացած եկամտի օգտագործման եւ բաշխման վերաբերյալ.

2) հաստատում է Հիմնադրամի դրամական միջոցների տեղաբաշխման ձեւերը, ուղղությունները եւ սահմանաչափերը.

3) Կանոնադրությամբ սահմանված կառավարման եւ ներդրումային քաղաքականության համաձայն՝ որոշում է կայացնում անձեռնմխելի կապիտալում ներառված ակտիվների կառավարման վերաբերյալ, այդ թվում՝ որոշում է օգտվել ներդրումային ծառայություն մատուցող անձանց, գույքի հավատարմագրային կառավարչի կամ գույքի կառավարման այլ մասնագիտացված անձանց ծառայություններից, կատարում է անկախ աուդիտորի ընտրությունը.

4) հաստատում է անձեռնմխելի կապիտալից ստացած եկամտի օգտագործման եւ բաշխման տարեկան ծրագիրը եւ դրա լրացումները եւ (կամ) փոփոխությունները.

5) սահմանում է Հիմնադրամի տնօրենի վարձատրության չափը.

6) իրականացնում է օրենքով եւ Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4.Հիմնադրամի տնօրենը՝

1) համաձայն հոգաբարձուների խորհրդի որոշման՝ իրականացնում է անձեռնմխելի կապիտալի կառավարումը, որոշմամբ նախատեսված դեպքում պայմանագրեր կնքում ներդրումային ծառայություն մատուցող անձանց, հավատարմագրային կառավարչի կամ գույքի կառավարման այլ մասնագիտացված անձանց հետ եւ վերահսկում դրանց կատարումը.

2) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը եւ դրա լրացումները եւ (կամ) փոփոխությունները.

3) իրականացնում է օրենքով եւ Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

5.Կանոնադրությամբ հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամի հնարավորություն նախատեսված լինելու դեպքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի պատվավոր անդամ կարող է դառնալ եւ խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել՝ խորհրդի կանոնադրությամբ սահմանված չափաքանակով դրամական միջոցներ տրամադրած նվիրատուն (իրավաբանական անձի դեպքում՝ նրա ներկայացուցիչը, իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում՝ նրա իրավահաջորդի ներկայացուցիչը, կտակի դեպքում՝ կտակարարի ժառանգը կամ կտակակատարը):

Հոդված 8. Հիմնադրամի գույքը

1.Հիմնադրամի գույք կարող են լինել՝

1) անձեռնմխելի կապիտալը.

2) անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտները.

3) անձեռնմխելի կապիտալից առանձնացված եւ այդ կապիտալի կառավարման ու Հիմնադրամի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ միջոցները:

2.Անձեռնմխելի կապիտալի ձեւավորումը, համալրումը եւ կառավարումն իրականացվում է սույն օրենքի 9-րդ եւ 10-րդ հոդվածներով, ինչպես նաեւ Հիմնադրամի կանոնադրությամբ եւ անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրով սահմանված կարգով, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված միջոցները տնօրինվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.Անձեռնմխելի կապիտալից առանձնացված եւ այդ կապիտալի կառավարման ու Հիմնադրամի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ միջոցների ձեւավորման աղբյուր կարող են լինել՝

1) հիմնադրի կողմից Հիմնադրամին ամրացված գույքը.

2) անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված տարեկան եկամտի մինչեւ 10 տոկոսը:

4.Հիմնադրամն անձեռնմխելի կապիտալի եւ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված դրամական միջոցների եւ գույքի համար վարում է առանձնացված հաշվառում՝

դրանց վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված եւ իր կողմից ներկայացվող հաշվետվություններում:

Հոդված 9. Անձեռնմխելի կապիտալի ձեւավորումը եւ համալրումը

1.Անձեռնմխելի կապիտալը համարվում է ձեւավորված դրա համար առանձնացված՝ Հիմնադրամի բանկային հաշվին ՀՀ քաղաքացիական օրենդրության համապատասխան կազմված նվիրատվության պայմանագրի եւ (կամ) կտակային հանձնարարությամբ չծանրաբեռնված կտակի հիման վրա դրամական միջոցների, Հիմնադրամի արժեթղթերի հավշին արժեթղթերի փոխանցման եւ (կամ) Հիմնադրամին անշարժ գույքի կամ իր էությունից ելնելով մշտական եւ պարբերական եկամուտ ենթադրող գույքի փոխանցման պահից:

2.Անձեռնմխելի կապիտալի համալրումն անձեռնմխելի կապիտալը կազմող սկզբնական գույքի ավելացումն է: Անձեռնմխելի կապիտալի համալրված մասն անձեռնմխելի կապիտալի բաղկացուցիչ մասն է:

3.Անձեռնմխելի կապիտալի ձեւավորման եւ համալրման ժամանակ դրամական միջոցներից եւ կարգավորվող շուկայում առեւտրին թույլատրված արժեթղթերից բացի այլ գույքի արժեքը գնահատվում է անկախ գնահատողի կողմից:

4.Անձեռնմխելի կապիտալի ձեւավորման եւ համալրման աղբյուրներն են՝

1) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց նվիրատվությունները, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները.

2) կտակային հանձնարարությամբ չծանրաբեռնված կտակները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների:

5.Անձեռնմխելի կապիտալի ձեւավորման աղբյուր կարող է լինել նաեւ Հիմնադրամի ստեղծման պահին հիմնադրի ներդրումը:

6.Անձեռնմխելի կապիտալը կարող է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ համալրվել նաեւ անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող այն եկամուտների հաշվին, որոնք չեն ծախսվել տվյալ ֆինանսական տարվա ընթացքում:

7.Եթե ստացված գույքը կամ դրա մի մասը սույն օրենքի իմաստով չի հանդիսանում թույլատրելի գույք կամ, եթե գույքը ստացվել է սույն հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ մասով չնախատեսված աղբյուրից, ապա Հիմնադրամը պարտավոր է գույքը ստանալուց հետո՝ 10 բանկային օրվա ընթացքում գույքն ամբողջությամբ կամ գույքի այն մասը, որը չի բավարարում սույն օրենքի պահանջները, վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այն փոխանցել պետական բյուջե: Հիմնադրամը տվյալ գույքը համարվում է չստացած:

Հոդված 10. Անձեռնմխելի կապիտալի կառավարումը

1.Անձեռնմխելի կապիտալը կառավարվում է բացառապես սույն հոդվածով նախատեսված կարգով:

2.Հիմնադրամը իրավասու է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար, կառավարումն առանձնացված իրականացնելու նպատակով, ստեղծել մի քանի անձեռնմխելի կապիտալներ: Այդ պարագայում հիմնադրամը պարտավոր է վարել առանձնացված հաշվառում եւ իրականացնել առանձնացված կառավարում:

3.Հիմնադրամը պարտավոր է վարել անձեռնմխելի կապիտալի ձեւավորման եւ համալրման, կառավարման, կառավարումից ստացված եկամուտը շահառուներին բաշխելու հետ կապված բոլոր գործարքների հաշվապահական հաշվառումը:

4.Անձեռնմխելի կապիտալի կառավարելիս Հիմնադրամի կառավարման մարմինները պարտավոր են գործել ելնելով Հիմնադրամի շահառուների շահերից:

5.Անձեռնմխելի կապիտալը չի կարող ծախսվել կամ որեւէ կերպ օտարվել՝ հանգեցնելով դրա նվազմանը:

6.Անձեռնմխելի կապիտալի դրամական միջոցները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ներդրվել «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 40-րդ հոդվածով նշված այն ակտիվներում, որոնք Հիմնադրամի կանոնադրությամբ համարվում են անձեռմխելի կապիտալի համալրման ենթակա ակտիվ:

7.Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում հավատարմագրային կառավարիչի վրա տարածվում են գույքի կառավարման նույն սահմանափակումները, ինչ Հիմնադրամի տնօրենի:

Անձեռնմխելի կապիտալի հավատարմագրային կառավարման ընթացքում կնքվող գործարքները պետք է կնքվեն ՀՀ օրենքների եւ իրավական ակտերի, այդ թվում ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 11. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամտի տնօրինումը

1.Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամուտն անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին համապատասխան տրամադրվում է շահառուներին, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ անձեռնմխելի կապիտալից ստացվող եկամտի այն մասի, որը ծրագրով նախատեսվել է օգտագործվել Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերի ֆինանսավորման նպատակով: Սույն օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում չծախսված եկամուտը խորհրդի որոշմամբ ուղղվում է անձեռնմխելի կապիտալի համալրմանը:

Հոդված 13. Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերը

1.Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերն են՝ շենքերի, շինությունների կամ տարածքների վարձակալության, հիմնական միջոցների ձեռքբերման, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցման, սույն օրենքով նախատեսված դեպքում աուդիտի անցկացման, Հիմնադրամի աշխատակիցների աշխատանքի վարձատրության եւ Հիմնադրամի կամ նրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման հետ կապված ծախսերը:

Հոդված 14. Անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը

1.Անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը ներառում է՝

1) տվյալ տարվա ընթացքում իրականացվող՝ Հիմնադրամի կանոնադրական նպատակները.

2) տվյալ տարվա ներդրումային քաղաքականությունը, ակտիվների կառավարման քաղաքականությունը.

3) կանխատեսվող եկամուտները եւ ծախսերը.

4) նախատեսվող միջոցառումները.

5) շահառունները.

6) շահառուների միջեւ անձեռնմխելի կապիտալից ստացված եկամուտների բաշխման կարգը եւ համամասնությունները.

7) վարչակառավարչական տարեկան ծախսերի ֆինանսավորման չափը.

8) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ:

2.Անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը հաստատում, ինչպես նաեւ դրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը՝ Հիմնադրամի տնօրենի առաջարկությամբ:

3.Անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագիրը, ինչպես նաեւ դրանում կատարված լրացումները եւ փոփոխությունները Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ընդունվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում ներկայացվում է իրավաբանական անձանց գրանցող մարմնին՝ Հիմնադրամի արխիվային գործում պահպանման համար, ինչպես նաեւ հրապարակվում եւ տրամադրվում է նվիրատուներին (կտակի դեպքում՝ նաեւ կտակարարի ժառանգներին եւ կտակակատարներին, վերակազմակերպված իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավահաջորդին):

Հոդված 15. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

1.Եթե Հիմնադրամի տարեկան շրջանառությունը հաշվետու տարում գերազանցում է 10 միլիոն դրամը, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններին ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը, ենթակա են պարտադիր աուդիտի՝ անկախ աուդիտորի կողմից, որին ընտրում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:

2.Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը եւ ստուգված տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են հիմնադրին, ինչպես նաեւ ըստ պահանջի՝ նվիրատուներին (կտակի դեպքում՝ նաեւ կտակարարի ժառանգներին եւ կտակակատարներին, իսկ վերակազմակերպված իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավահաջորդին):

Հոդված 16. Հիմնադրամի գործունեության հրապարակայնությունը

1.Յուրաքանչյուր տարի, հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ, Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (http://www.azdarar.am) պարտավոր է հրապարակել՝

1) տարեկան հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ Հիմնադրամին հատկացված դրամական միջոցների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի մասին, անձեռնմխելի կապիտալի ծրագրի իրականացման մասին տեղեկություններ, այդ թվում՝ ֆինանսական տարում Հիմնադրամից ստացված եւ ծախսված դրամական միջոցների ընդհանուր չափը, շահառուներին կատարված վճարումների չափը, մատուցված ծառայությունները եւ (կամ) նրանց փոխանցված գույքի ծավալը.

2) իր ֆինանսական գործունեության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը (աուդիտի ենթարկվելու դեպքում):

2.Տարեկան հաշվետվությունն անհարժեշտության դեպքում ուղարկվում է նվիրատուներին (կտակի դեպքում՝ նաեւ կտակարարի ժառանգներին եւ կտակակատարներին, վերակազմակերպված իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավահաջորդին):

3.Տարեկան հաշվետվության ձեւը, հրապարակման եւ ներկայացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

4.Նվիրատուները (կտակի դեպքում՝ նաեւ կտակարարի ժառանգները եւ կտակակատարները, իսկ վերակազմակերպված իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավահաջորդը) իրավունք ունեն Հիմնադրամից պահանջելու տեղեկություններ՝ Հիմնադրամի կանոնադրության, անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրի, անձեռնմխելի կապիտալի ձեւավորման, համալրման, անձեռնմխելի կապիտալի ներդրման ուղղությունների, տեսակի, ժամկետայնության, եկամտաբերության, անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եւ բաշխված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաեւ Հիմնադրամի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը: Հիմնադրամի մարմինները պարտավոր են պահանջված տեղեկություններն անվճար տրամադրել դիմողին՝ պահանջի ստացման օրվանից 7-օրյա ժամկետում:

Հոդված 17. Հիմնադրամի գործունեության վերահսկողությունը

1.Սույն օրենքի, ինչպես նաեւ «Հիմնադրամների մասին» օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաեւ այլ իրավասու պետական մարմինները՝ իրենց իրավասություններին եւ ստուգումների ու ուսումնասիրությունների՝ օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

2.Եթե Հիմնադրամն անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտն օգտագործել է անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին անհամապատասխան, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն իրավունք ունի պահանջելու տրամադրված միջոցները 10-օրյա ժամկետում վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

3.Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքից՝ Հիմնադրամին գրավոր նախազգուշացնելուց եւ իր կողմից նշված ողջամիտ ժամկետում Հիմնադրամի կողմից խախտումները չվերացնելուց հետո:

4.Հիմնադրամը սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը: Սահմանված ժամկետում հաշվետվությունը չհրապարակելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն այդ մասին չծանուցելու կամ հաշվետվությունը թերի հրապարակելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը Հիմնադրամի տնօրենի նկատմամբ կիրառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.18-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Հոդված 18. Հիմնադրամի լուծարումը

1.Հիմնադրամը կարող է լուծարվել դատարանի որոշմամբ՝ շահագրգիռ անձանց դիմումով, եթե՝

1) Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, եւ անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) ստեղծման օրվանից երեք տարվա ընթացքում Հիմնադրամը չի կարողանում հասնել անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրով նախատեսված որեւէ նպատակի.

3) իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է իր կանոնադրությամբ կամ անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրով նախատեսված նպատակներից.

4) Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրությանը հակասող գործունեություն.

6) սույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցը կիրառելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաշվետվության հրապարակման պահանջը չի կատարվել կամ ոչ պատշաճ է կատարվել.

7) Հիմնադրամն ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ: Էական են համարվում այնպիսի խախտումները, որոնք կարող են հիմք հանդիսանալ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն Հիմնադրամի գրանցումը մերժելու համար:

2.Օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաեւ այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ՝ Հիմնադրամի գույքը փոխանցվում է նվիրատուներին՝ նրանց կողմից Հիմնադրամին տրամադրած միջոցների չափին համապատասխան, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե:

Հոդված 19.

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

2.Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված այն կազմակերպությունները, որոնց անվանման մեջ պարունակվում են «անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ» բառերը, մեկ տարվա ընթացքում պարտավոր են սահմանված կարգով փոփոխել իրենց անվանումը՝ դրանից հանելով «անձեռնմխելի կապիտալով հիմնադրամ» բառերը: Այդ պահանջը չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դիմումով տվյալ կազմակերպության անվանումը ենթակա է փոփոխման դատական կարգով:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի 1-ին հոդվածում լրացնել նոր՝ 8-րդ մաս.

«8. Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների գործունեության սահմանափակումների, կանոնադրության, կառավարման մարմինների իրավասությունների, գույքի ձեւավորման եւ կառավարման, ֆինանսական գործունեության աուդիտի, հաշվետվությունների ներկայացման եւ լուծարման առանձնահատկությունները սահմանվում են «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով: Սույն օրենքի դրույթները տարածվում են անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի վրա, եթե «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով այլ բան սահմանված չէ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-673[2]-23.06.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարեգործության մասին» 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-424-Ն օրենքի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան*

1. Սույն օրենքը կարգավորում է բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները, սահմանում է բարեգործության կարգավորման իրավական հիմքերը, նպատակները, իրականացման սկզբունքները, պետության կողմից բարեգործությանն աջակցելու ձեւերը, բարեգործական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունները:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի վրա, եթե «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով այլ բան սահմանված չէ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-673[3]-23.06.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 30-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5.1-րդ կետ.

«5.1) ներդրումային ծառայություններ մատուցող անձ չհամարվող անձի կողմից անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի միջոցների կառավարման վրա.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-673[4]-23.06.2020-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր՝ 56-րդ եւ 57-րդ կետեր.

«56) «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝ անձեռնմխելի կապիտալի ձեւավորման եւ (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների եւ պետական պարտատոմսերի փոխանցումը (տրամադրումը).

57) «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝ անձեռնմխելի կապիտալի կառավարումից եկամտի ստացումը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 126-րդ հոդվածում ավելացնել նոր՝ 8-րդ մաս.

«8. Շահութահարկի վճարումից ազատվում են «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» օրենքով սահմանված՝

1) անձեռնմխելի կապիտալի ձեւավորման եւ (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին փոխանցված (տրամադրված) դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների եւ պետական պարտատոմսերի արժեքի չափով.

2) անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամտի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր՝ 40-րդ կետ.

«40) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներից ստացվող գույքը եւ դրամական միջոցները:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԱՆՁԵՌՆՄԽԵԼԻԿԱՊԻՏԱԼՈՎՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՄԱՍԻՆ, «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄԼՐԱՑՈՒՄԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ, «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ, «ԱՐԺԵԹՂԹԵՐԻՇՈՒԿԱՅԻՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄԼՐԱՑՈՒՄԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՀԱՐԿԱՅԻՆՕՐԵՆՍԳՐՔՈՒՄԼՐԱՑՈՒՄՆԵՐԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆՕՐԵՆՔՆԵՐԻՆԱԽԱԳԾԵՐԻՓԱԹԵԹԻԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը եւառկա խնդիրներըՄիջազգայնորեն ընդունված տերմինաբանությամբ՝ «Endowment Fund»-երի (այսուհետ՝ Էնդաումենթ) գործունեության համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Էնդաումենթները զգալի դեր ունեն կրթության, գիտության, նորարարության, առողջապահության, մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի եւսպորտի, սոցիալական օգնության (աջակցության), բնապահպանության, ինչպես նաեւայլ հանրօգուտ բնագավառների ոչ առեւտրային կազմակերպություններին անհրաժեշտ ներդրումների, բարեգործությունների, նվիրատվությունների, նվիրաբերությունների եւանհատույց այլ միջոցների ներգրավման հարցում:Էնդաումնեթների եւ նմանատիպ այլ ֆոնդերի (հիմնադրամների) միջեւ էական տարբերությունը կայանում է նրանում, որ Էնդաումենթում ներգրավված ակտիվները, որպես կանոն, արգելվում է ծախսել (սպառել), իսկ այդ ակտիվների շրջանառությունից (կառավարումից) ստացված եկամուտները թույլատրվում է օգտագործել հիմնականում Էնդաումենթը ստեղծած ոչ առեւտրային կազմակերպության հանրօգուտ նպատակներով: ՆերկայումսԷնդաումենթները զգալիորեն նպաստում են ուսումնական հաստատությունների, թանգարանների, գրադարանների, սպորտային եւ այլն կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովմանը: Օրինակ՝ ԱՄՆ-ում, որտեղ Էնդաումենթներն ամենամեծ տարածումն են գտել բարձրագույն կրթության համակարգում, Հարվարդի համալսարանի Էնդաումենթը 2017թվականին կազմել է 37մլրդ. դոլար,իսկ ԱՄՆ կրթական հաստատությունների կողմից հավաքագրված էնդաումանթների ընդանուր ծավալը կազմել է շուրջ 600 մլրդ ԱՄՆ դոլար:1Պետք է նշել, որ այս ֆոնդերը 2019թ տարեկան միջին հաշվով ապահովել են5.3% եկամտաբերություն:2Աշխարհի մի շարք երկրներում Էնդաումենթների գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորված են օրենսդրական ակտերով: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում այդ հարաբերությունները կարգավորված են 1972 թ. ակտի հիման վրա՝ 2006 թվականին ընդունված Ինստիտուցիոնալ Ֆոնդերի Միասնական Ողջամիտ Կառավարման Ակտով (Uniform Prudent Management of Institutional Funds act կամ UPMIFA)3: Թեեւ վերոգրյալը, ինչպես նաեւ Էնդաումենթների գործունեության պրակտիկան վկայում է, որ Էնդաումենթը կենսունակ եւ կարեւոր

1https://nces.ed.gov/fastfacts/display.asp?id=732https://www.insidehighered.com/news/2020/01/30/endowment-returns-10-year-average-rises-leaders-see-clouds-horizon3https://www.uniformlaws.org/HigherLogic/System/DownloadDocumentFile.ashx?DocumentFileKey=d7b95667-ae72-0a3f-c293-cd8621ad1e44&forceDialog=0

գործիք է ոչ առեւտրային կազմակերպության արդյունավետ գործունեության ապահովման համար, սակայն պետք է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում Էնդաումենթների ստեղծումըեւգործունեությունը դեռեւս կարգավորված չէ, իսկ գործող օրենսդրության շրջանակներում Էնդաումնեթ ստեղծելու նախաձեռնության դեպքում անխուսափելիորեն առաջանում են մի շարք խնդիրներ, քանի որ ՀՀ օրենսդրությամբ մասնավորապես սահմանված չեն՝

1)Էնդաումենթիձեւավորման, համալրման եւ կառավարման կարգը,
2)Էնդաումենթիկազմակերպա-իրավական տեսակը եւ իրավականվիճակի առանձնահատկությունները,
3)Էնդաումենթիցստացվածեկամուտներըտնօրինելուկարգը,
4)Էնդաումնեթինմիջոցներտրամադրողանձինքեւնրանցիրավասությունները,
5)Էնդաումենթներիգործունեությունը խթանելու նպատակով հարկային արտոնությունների կիրառումը,

6)Էնդաումենթերիգործունեությաննկատմամբվերահսկողությունը:
Առաջարկվող լուծումներըՀայաստանի Հանրապետությունում Էնդաումենթի ստեղծման նախընտրելի տարբերակը հիմնադրամի կարգավիճակով ոչ առեւտրային կազմակերպության՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի (այսուհետ՝ ԱԿՀ) ստեղծում է: Նման մոտեցումը, մասնավորապես, պայմանավորված է հետեւյալով՝
1) հիմնադրամ է համարվում քաղաքացիների եւ (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված եւ անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մաս), ինչպիսին, ըստ էության, հանդիսանում է էնդաումենթը,
2) հիմնադրամի շահառու կարող են լինել ինչպես հիմնադրիրը, այնպես էլ այլ ֆիզիկական եւ իրավաբանական անձինք,
3) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի միջոցով գործուն հնարավորություն է ստեղծվումվերահսկելիհիմնադրամիգործունեությունը, այնդարձնելովթափանցիկ Եւվերահսկելի:
Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածի 7-րդ մասը, ինչպես նաեւ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը թույլ են տալիս հիմնադրամների առանձին տեսակների (տվյալ դեպքում՝ ԱԿՀ-ի) առանձնահատկություններն ու իրավական կարգավիճակը սահմանել առանձին օրենքով, ինչը հանրության համար ԱԿՀ-ին վերաբերող դրույթներն առավել մանրամասն եւ մատչելի սահմանելու լիարժեք հնարավորություն է տալիս:Այդպիսով, «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանել ԱԿՀ իրավական վիճակի առանձնահատկությունները, անձեռնմխելի կապիտալի կառավարման եւ դրանից ստացվող եկամտիտնօրինման կարգն ու պայմանները,ինչպեսնաեւԱԿՀ-իգործունեությանկարգավորմանհամարանհրաժեշտայլդրույթներ:
Նախագիծըմշակվելէհաշվիառնելովէնդաումենթերիգործունեության միջազգային փորձը, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրության առանձնահատկությունները: Նախագծի հիմքումորեւէ երկրի օրենսդրական ակտ չի դրվել:
Նախագծում ամրագրված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների սահմանումները, մասնավորապես՝1) «անձեռնմխելի կապիտալ» հասկացության սահմանումը, ըստ որի՝ անձեռնմխելի կապիտալը նվիրատուների տրամադրած միջոցներից ձեւավորված անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի ակտիվների համախումբ է, որը չի կարող ծախսվել կամ որեւէ կերպ օտարվել՝ հանգեցնելով դրա արժեքի նվազմանը: Բացի այդ,
Նախագծով սահմանված է, որ անձեռնմխելի կապիտալի կառավարման արդյունքում ստացված եկամուտը, անձեռնմխելի կապիտալիտարեկան ծրագրին համապատասխան, տրամադրվում է շահառուներին, իսկ դրա սահմանափակ մասն էլ (մինչեւ 10 տոկոսը) կարող է օգտագործվել ԱԿՀ վարչակառավարչական ծախսերի ֆինանսավորման նպատակով:
Ըստ այդմ, Նախագծով սահմանվել է անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրի բովանդակությունն ու հաստատման (փոփոխման) կարգը, համաձայն որի՝ անձեռնմխելի կապիտալի ծրագիրը Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված որոշակի հանրօգուտ նպատակների եւ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների համախումբ է, որը հաստատում եւ փոփոխության է ենթարկում ԱԿՀ հոգաբարձուների խորհուրդը:
2) «նվիրատու» հասկացության սահմանումը, ըստ որի՝ նվիրատուն անձեռնմխելի կապիտալի ձեւավորման կամ համալրման նպատակով՝ նվիրատվությամբ կամ կտակային հանձնարարությամբ չծանրաբեռնված կտակով ԱԿՀ-ին անհատույց դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցներ եւ (կամ) պարտատոմսեր տրամադրած անձն է: Այս սահմանմամբ, ինչպես նաեւ Նախագծի այլ դրույթներով ամրագրվում է, որ անձեռնմխելի կապիտալի ձեւավորման աղբյուրներ կարող են լինել միայն նվիրատվությունները եւ կտակային հանձնարարությամբ չծանրաբեռնված կտակները, որոնցով կարողեն տրամադրվել միայն դրամական միջոցներ կամ պետական պարտատոմսեր:
Ըստ այդմ, անհատույց կարգով տրամադրվող այլ միջոցները՝ նվիրաբերությունները եւ կտակային հանձնարարությամբ ծանրաբեռնված կտակները չեն ներառվել անձեռնմխելի կապիտալի ձեւավորման աղբյուրների շրջանակում, քանի որ ՀՀ օրենսդրությանը համապատասխան դրանք

կարող են ունենալ նվիրաբերողի կամ կտակարարի սահմանած տարբեր նպատակներ (նշանակություն), իսկ տվյալ դեպքում անձեռնմխելի կապիտալում կուտակված միջոցների օգտագործման նպատակը մեկն է՝ այդ միջոցներից ստացված եկամուտն օգտագործել ԱԿՀկանոնադրությամբնախատեսվածհանրօգուտնպատակներովեւշահառուներիհամար, որոնքփոփոխությանենթակաչեն: Ուստի, երբնվիրատուն՝նվիրատվության պայմանագրով կամ կտակարարարը՝ կտակով ԱԿՀ-ին միջոցներ է տրամադրում, այդ միջոցներն օգտագործվում են նրան նախապես հայտնի շահառուների համար եւ անփոփոխ նպատակներով: :Անձեռնմխելի կապիտալիձեւավորմանը, համալրմանըեւկառավարմանըվերաբերողդրույթներից(իթիվսվերը նշվածների) հատկանշական են հետեւյալ դրույթները.1) նվիրատվությունը համարվում է ընդունված, եթե այն ստացման պահից երկու բանկային օրվա ընթացքում չի վերադարձվում նվիրատուին, որը ԱԿՀ-ի համար հնարավորություն է ընձեռում վերադարձնել այն նվիրատվությունները, որոնք, ըստ էության, հակասում են ԱԿՀ-ի ստեղծման գաղափարներին.
2) անձեռնմխելի կապիտալը կարող է համալրվել ոչ միայն նվիրատվություններով եւ կտակներով, այլեւ անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող այն եկամուտներով, որոնք տվյալ ֆինանսական տարվա ընթացքում չեն ծախսվել.
3) անձեռնմխելի կապիտալի դրամական միջոցները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներդրվում են Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերում, որով պարտադրվում է, որ այդ միջոցները ներդրվեն երաշխավորված եկամուտ ապահովող ակտիվներում, ինչպիսիք են պետական պարտատոմսերը, եւ զերծ լինեն կորստի ռիսկից:
4) պարտատոմսերում ներդրումները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գանձապետական պահառուի կամ դիլերի հետ կնքված պայմանագրի համաձայն:
5) անձեռնմխելի կապիտալից ստացվող եկամուտը կարող է օգտագործել բացառապես անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրով սահմանված կարգով:ԱԿՀ-ն վերաբերող դրույթներից (ի թիվս վերը նշվածների) հատկանշական են հետեւյալ դրույթները:
1) ԱԿՀ-ն չի կարող բացի պարտատոմսերից, անձեռնմխելի կապիտալը ներդնել այլ արժեթղթերում, այդ կապիտալի հաշվին ձեռք բերել գույք, գույքային իրավունքներ կամ նյութական եւ (կամ) ֆինանսական այլ ակտիվներ, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից, անդամակցել միջազգային եւ օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:
2) ԱԿՀ-ի՝ չվերակազմակերպվելու պահանջը կոչված է ապահովելու ԱԿՀ նկատմամբ նվիրատուներիվստահությունը, ինչպես նաեւ բացառելու ԱԿՀ-ի կուտակած միջոցներն այլ նպատակներով օգտագործելու եւ այլ չարաշահումների հնարավորությունը:
3) ԱԿՀ-ն կարող է անձեռնմխելի կապիտալից առանձնացված եւ այդ կապիտալի կառավարման ու ԱԿՀ-ի բնականոն գործունեության ապահովման համար օգտագործել միայն հիմնադրի կողմից ԱԿՀ-ին ամրացված գույքը, ինչպես նաեւ անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված տարեկան եկամտի մինչեւ 10 տոկոսը: Նման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որպեսզի բացառվի անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամտի օգտագործման չարաշահումները եւ այդ եկամուտը հիմնականում օգտագործվի ԱԿՀ կանոնադրական՝ հանրօգուտ նպատակներով:
4) Նախագծով նախատեսված է նաեւ ԱԿՀ գործունեության հաշվետվությունները հրապարակելու ժամկետները եւ կարգը: Բացի այդ, հաշվետվության հրապարակման կարգը խախտելու, ինչպես նաեւ անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտը՝ անձեռնմխելի կապիտալի տարեկան ծրագրին անհամապատասխան օգտագործելու դեպքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից կարող են կիրառվել պատասխանատվության միջոցներ:
5)ԱԿՀ-ինմիջոցներիտրամադրումըխրախուսելունպատակովՆախագծովսահմանվելէ, որ ԱԿՀ-ը եւ անձեռնմխելի կապիտալի ձեւավորման (համալրման) նպատակով գույք տրամադրած անձինք օգտվում են օրենքով սահմանված հարկային եւ այլ արտոնություններից: Նախատեսվող հարկային արտոնությունները էապես կխթանեն ոչ միայն ԱԿՀ-ների ստեղծումը եւ դրանց գործունեությունը, այլեւ հստակ ազդակներ են պարունակում պոտենցիալ այն նվիրատուների համար, որոնք շահագրգռված են ՀՀ-

ում իրենց միջոցները հանրօգուտ նպատակների ծառայեցնելու առումով, սակայն օրենսդրական դաշտի անորոշությունների պայմաններում դեռեւս ձեռնպահ են մնում գործնական քայլեր իրականացնելուց:Բացի վերը նշվածներից, օրենսդրական նախաձեռնության փաթեթում ներառված են նաեւ «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներ մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ մի շարք այլ օրենքներում լրացումներ եւ (կամ) փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծեր:Ակնկալվող արդյունքըՆախագծերի փաթեթի ընդունման արդյունքում կստեղծվեն օրենսդրական անհրաժեշտ հիմքեր ԱԿՀ-ների տեղծման եւ գործունեության համար, իսկ ԱԿՀ-ներն իրենց հերթին կօժանդակեն՝ ԱԿՀ-ների հիմնադիրների (մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների) գործունեության ընդլայնմանը եւ ֆինանսական կայունության ապահովմանը, քանի որ կկանոնակարգվեն հնարավոր նվիրատվությունների հոսքերը եւ դրանց օգտագործման ուղղությունները: Բացի այդ, ԱԿՀ-ի հիմնադիրը ստացված եկամուտները կարող է օգտագործել այնպիսի բնագավառներում հանրօգուտ աշխատանքների կատարման նպատակով, որտեղ պետական (բյուջետային) միջոցները խիստ սահմանափակ ծավալներ են կազմում: Նախագծերի փաթեթի ընդունումը բխում է նաեւ ՀՀ-ում իրականացվող կայուն զարգացման ծրագրի, ինչպես նաեւ ՀՀ կառավարության գործունեության ծրագրի տրամաբանությունից եւ կարող է զգալիորեն նպաստել երկրում աղքատության հաղթահարման գործընթացի արագացմանը եւ սոցիալական մի շարք խնդիրների լուծմանը: ԱԿՀ-ի կողմից պետական պարտատոմսերում կատարվող ներդրումներն իրենց հերթին կնպաստեն պետական պարտատոմսերի շուկայի ակտիվացմանը եւ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար լրացուցիչ ներքին աղբյուրների ձեւավորմանը: